ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Խորեն Ա Մուրադբեկյանի անունը Մայր Տաճարի առջև ամփոփելու օրերին Սանդրո Բեհբուդյանի աշխատասիրությամբ լույս տեսավ «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» շարքի երկրորդ գիրքը՝ «Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (Հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.)» մեծադիր հատորը, որում նահատակ Կաթողիկոսի կերպարը ամբողջանում է ոչ թե հեղինակային վերլուծությունների ու արժևորումների, այլ խնամքով ի մի հավաքված ու ժամանակագրական ընթացքով ներկայացված պատմական վավերագրերի միջոցով:

Այս գիրքը հրատարակվել է հովանավորությամբ Մեսրոպ արքեպս. Աշճյանի և մեկենասությամբ տեր և տիկին Ճան Երվանդ Գույումճյանի՝ ի հիշատակ իրենց ծնողների՝ Հովհաննես և Վարդուհի Գույումճյան-Փափազյանների:

Հրատարակության օրերին այնքան համահունչ հիշյալ գործը, սակայն, միայն այս օրերի թելադրանքով չի պայմանավորված, այլև արդյունքն է հեղինակի տևական ու հետևողական աշխատանքի՝ Հայ Եկեղեցու պատմության որոշակի մի ժամանակահատվածը ներկայացնել ըստ եկեղեցական վավերագրերի և արխիվային փաստաթղթերի: Դեռևս 1994 թ. հրատարակված առաջին հատորը, որը լույս է տեսել մեկենասությամբ գնդապետ Հարությունի և Ալիս Սաչաքյանների, ի հիշատակ Հակոբ Տեր-Մելքոնյանի, ընդգրկում է 1921-1938 թթ. վավերագրերը: Դրանցում զգալի թիվ են կազմում Խորհրդային Հայաստանի իշխանություններին ուղղված դիմումները, որոնց մեջ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու նրա լիազոր ներկայացուցիչները բողոքում են Հայ Եկեղեցու ունեցվածքի բռնագրավման, իրավունքների սահմանափակման, հոգևորականների ու հավատացյալների դեմ գործադրվող բռնությունների համար:

Այս վավերագրերը նաև վկայում են, որ Հայ ժողովրդի կյանքում Հայ Եկեղեցու առանձնահատուկ վիճակը պայմանավորված չէր միայն պետականության բացակայության պայմաններում մեծ տերությունների մեջ տրոհված լինելու և այդ տերությունների կողմից տրված վարչա-իրավական որոշակի առանձնաշնորհումներով: Երբ խորհրդային իշխանության որոշմամբ Եկեղեցին անջատվեց պետությունից, և Եկեղեցուն վերապահված մի շարք ներքին իրավական և կրթա-մշակութային գործառույթներ փոխանցվեցին պետությանը, որը միաժամանակ չթաքնված թշնամանքով էր վերաբերվում Եկեղեցուն, ժողովրդի համար Ս. Էջմիածինը շարունակեց մնալ իր հոգևոր ծնողը, որին ուղղված տարբեր նամակներով և զեկուցագրերով չդադարեց պատմել իր կրած դառնությունների ու տառապանքների և այն փորձերի մասին, որով աշխատում էին իրեն խորթացնել իր հոգևոր ծնողից:

Այս երկու հատորները նաև որոշակի պատկերացում են տալիս Հայ հոգևորականության բազմադարյան նահատակության, մարտիրոսագրության 1920-30 թթ. ընդգրկող երկու տասնամյակների մասին: Պատմությունը պահել է այն եկեղեցականների անունները, ովքեր, հավատարիմ Հայ հոգևորականի բարձր կոչմանը, չընկրկեցին ո՛չ սպառնալիքներից և ո՛չ էլ հրապուրիչ տարբեր խոստումներից, այլ ընթացան իրենց վերապահված ճանապարհով, որը շատերի

համար վերջակետվեց 1930-ական թթ. գաղափարներով: Իսկ հալածանքների ժամանակ և աքսորի ճանապարհներին գրված նամակները, առաջին հատորի խմբագիր և առաջաբանի հեղինակ Արշակ Մաղալյանի ընորոշմամբ, նաև ցույց են տալիս, թե ինչ բարձր կրթական պատրաստվածություն և լեզվական խմացություն են ունեցել նրանք:

Խորեն վարդապետ Սուրադբեկյանը ճարտարապետ Թորոս Թորամանյանի, Մեսրոպ Վրդ. Նշանյանի և Խաչիկ Վրդ. Դաղյանի հետ Երևանի առաջնորդարանում (1910 թ. 25 մայիս)

Ինչ վերաբերվում է երկրորդ հատորին, ապա, ինչպես «Փոխան յառաջաբանի»-ում է գրում Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը, ի տարբերություն նախորդի, որը «կը ընդգրկէր 1921-1938 ժամանակահատուածը, եւ ընդհանուր պատկեր մը կու տար այդ շրջանին մասին, ներկայ հատորը ունի նեղ շրջագիծ մը ունի եւ կը կեդրոնանայ Խորէն Ա Կաթողիկոսի հոգեւոր գործունէութեան վրայ, իր հոգեւորականի առաջին քայլերէն ընդհուպ մինչեւ իր եղերական վախճանը»:

Այս հատորում զետեղված վավերագրերը վերաբերում են նահատակ Կաթողիկոսի ապրած 65 տարիներից 38-ին: Դրանցից առաջինը գրված է 1901 թվականին: Մոսկվայի, Գերմանիայի և Եվրոպայի համալսարաններն ավարտած ու հայրենիք վերադարձած 28-ամյա Ալեքսանդր Մուրադբեկյանը դիմում է Խրիմյան Հայրիկին՝ հայտնելով հոգևորական դառնալու և Հայ Եկեղեցու միջոցով հայ ժողովրդին ծառայելու իր ցանկության մասին: Տարեվերջին, ձեռամբ Սեանի վանքի վանահայր Սարգիս եպիսկոպոսի, ձեռնադրվում է արեղա՝ ստանալով Խորեն անունը: Ինչպես երեք տասնամյակ անց կաթողիկոսական, այնպես էլ այս շրջանում արեղայական ձեռնադրությունը համընկավ Հայ Եկեղեցու իրավունքների

ոտնահարման և ունեցվածքի բռնագրավման դեմ պայքարին, որի համար էլ ցարական իշխանությունների որոշմամբ նորընծա աթեղան դատապարտվում է հինգ տարվա աքսորի: Այն ասես խորհրդանշում էր նրան սպասվող ապագա լուսապսակը: Աքսորի ճանապարհը բռնած երիտասարդ հոգևորականը Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմում է միայն մեկ խնդրանքով՝ «Օրհնեցեք իմ ճանապարհը»:

Աքսորից վերադառնալուց հետո էլ նրան վիճակված չէր խաղաղ կյանք, այլ վերապահված էր Հայ եկեղեցին ներկայացնել նախախորհրդային շրջանում մեր ժողովրդի համար բախտորոշ մի շարք համաժողովներում և իրադարձություններում: Այս առթիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված գրություններում և անձնական գրառումներում ուրվագծվում է միջկուսակցական և նեղ խմբակային ու համայնքային-հատվածական շահերից վեր, համազգային մտածողության տեր, հայրենիքի, աշխարհասփյուռ հայության ու Հայ եկեղեցու վաղվա օրվա վիճակով խորապես մտատանջվող հայ հոգևորականի կերպարը:

Հայաստանի առաջին հանրապետության շրջանում դիվանագիտական-եկեղեցական առաքելությամբ նախ Եվրոպա, ապա Ամերիկա մեկնելով, 1920 թ. վերջին, երբ Հայաստանը տարուբերվում էր թուրքական և բոլշևիկյան սպառնալիքների միջև, որևէ պատրվակով արտասահմանում մնալու փոխարեն շտապում է հայրենիք՝ Գևորգ Ե Կաթողիկոսի և իր միաբանակից մյուս եղբայրների կողքին լինելու համար:

Հրապարակված վավերագրերը վկայում են, որ 18 տարի (1920 թվականի վերջից մինչև 1938 թ.), մինչև իր կյանքի եղերական ավարտը, նրա ողջ գործունեության հիմքում ընկած է եղել մեկ նպատակ՝ բոլշևիկյան բռնությունների մղձավանջային այս շրջանում հնարավոր նվազ կորուստներով պահպանել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին իր ամբողջության մեջ:

Խունացած վավերագրերի պաշտոնական ոճով գրված էջերում գծագրվում է ռոմանտիկական գրականությանը բնորոշ միայնակ հերոսի կերպարը, որը, Հանուն Ս. Էջմիածնի ազգակենտրոն և ազգապահպան գաղափարի ու Հայ եկեղեցու ամբողջականության, միջազգային լարված հարաբերությունների պայմաններում Սփյուռքի հայությանն ու տարբեր երկրների ղեկավարներին ու պատասխանատուներին ուղղված խոսքում շեշտում էր, թե Մայր Աթոռը ազատ է իր գործունեության մեջ, որին իշխանությունները որևէ կերպ չեն միջամտում, իսկ երկրի ներսում փորձում էր հավասարել Մայր Աթոռի չեզոքությունն ու հավատարմությունը խորհրդային կարգերին:

Հիշյալ վավերագրերի համեմատությունում այնքան պարզորոշ է երևում նրա վիճակի այս ներքին ողբերգականությունը: Դասական կրթություն ստացած և հայոց հոգևոր մշակույթին ու մատենագրությանը քաջածանոթ Հայրապետը եթե Սփյուռքի հայությանն ուղղված հայրապետական իր խոսքում և կոնդակներում անդրադառնում էր Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակին, հայ կյանքում Աստվածաշնչի հեղաշրջիչ ու հոգեփոխիչ դերին և ընդհանրապես հոգևոր մշակույթի հարցերին, ապա Սուրբ Էջմիածնից Երևան՝ Խաչիկ Մուղդուսուն և նման ազգատոյց բոլշևիկյան մտադարներին ուղղված դիմումներում արդեն ստիպված էր բողոքելու ավերվող եկեղեցիների, աքսորվող հոգևորականների, եկեղեցու բռնագրավվող արժեքների համար: Նյութական հաշվարկներ, փաստեր ու հիմնավորումներ այս դեկուցագրերում և մտքի ճախրանք՝ Սփյուռքին

ուղղված խոսքում, որը միշտ էլ առանձնացել է իր հոգևոր խորքով ու գեղեցիկ հայերենով: Բերենք մի քանի բնորոշ օրինակներ: Կաթողիկոսական ընտրությունից հետո, ի պատասխան իրեն ուղղված շնորհավորանքների, գրում է. «Մաղթում եմ Փրկչին, որ Իր լուսատու հոգուց ճաճանչած լուսոյ շողերը միշտ վառ պահէ հայ հոգևոր դասի հոգու մէջ՝ անշեղ առաջնորդելով նրան դէպի ճշմարտութիւն, և իր հոգու սիրոյ կտակով ջերմացնէ հայ հաւատացեալ հօտի սիրտը դէպի իր Եկեղեցին և պատմական սրբավայրերը... Մաղթում եմ նաև, որ նա լինի այցելու և հովանաւոր իր փոքրիկ, բայց միշտ հաւատարիմ հօտին հայ ժողովրդին, պարգևելով նորա հոգուն կենսունակութիւն և ստեղծագործող զօրութիւն, ինչպէս և ազգային միութեան կարևորագոյն գիտակցութիւն, որպէսզի նա յարատև և բարեբաստիկ կեանք ունենայ և՛ հայրենիքում, և՛ գաղթավայրերում»: Իսկ բուլղարահայությանը 1934 թ. ուղղված կոնդակում ասում է. «Ցորդոր հայրական կարդամք առ ձեզ, սիրելիք, զի սիրեսջիք զԵկեղեցին Հայաստանեայց, զհիմն որոյ Միածին էարկ և քարինք որոյ ներկեալ կան արեամբ անձնազոհ նախնեաց և բիւրաւոր անմեղ նահատակաց մերոց, հնոց և նորոց, որք սրբութեամբ կատարելով զպարտիս իւրեանց, աշխատեալ են վասն լուսաւորութեան և փրկութեան տառապեալ ազգիս հայոց»:

Դժվար է ասել, այս տողերը գրելիս երջանկահիշատակ Հայրապետը կանխագգացե՞լ է, որ ընդամենը մի քանի տարուց իրեն ևս վիճակվելու է «սրբութեամբ կատարելով զպարտիս իւր» հավելելու իր հիշած նահատակների շարքերը: Հատկանշական է սակայն, որ ինչքան օղակը սեղմվում էր Մայր Աթոռի շուրջ, այնքան ավելի աննահանջ էր դառնում իր նահատակությանն ընդառաջ գնացող Հայրապետը:

Այստեղ կցանկանայինք անդրադառնալ մեկ հարցի. վավերագրերի վերջում բերված են ժամանակակիցների հուշերի վրա խարսխված մերօրյա մի քանի հեղինակների վարկածները և խորհրդածությունները, թե Խորեն Ա Մուրադբեկյանին սպանեցին, որովհետև նա ընդդիմանում էր գերմանահայ բարերարների կողմից Մայր Աթոռին հատկացված մեքենաները խորհրդային իշխանություններին հանձնելուն, ինչպես նաև չէր ցանկանում Սփյուռքում հանգանակություններ կազմակերպել ի նպաստ Խորհրդային Հայաստանի և, վերջապես, թե սկզբնապես ծրագրված է եղել էլեկտրական լարերով հարվածելով թունավոր դարձնել, սակայն անզգուշաբար սպանել են՝ իրենք էլ սոսկալով իրենց արածից: Դժբախտաբար հիմնազուրկ այս վարկածները որոշակի գրական-գեղարվեստական երանգավորմամբ իրենց արտացոլումը գտան տարբեր հրապարակումներում՝ Խորեն Ա Մուրադբեկյանի աճյունը Ս. Գայանեից Մայր Աթոռ փոխադրելու օրերին:

Այս հատորում բերված վավերագրերն իսկ հստակորեն վկայում են, որ թե՛ Խորհրդային Հայաստանի և թե՛ միութենական ղեկավարությունը խորապես հասկանում էր համայն հայության կյանքում Ս. Էջմիածնի դերն ու կարևորությունը և Մայր Աթոռի գահակալի դեմ կատարված որևէ ոտնձգության հնարավոր միջազգային հետևանքները: Այս պատճառով էլ «համաշխարհային հեղափոխությունը» ամբողջ աշխարհում տարածելու փորձերի համար ահռելի միջոցներ ծախսող երկիրը, հանուն երեք մեքենայի, Ամենայն Հայոց Կաթողիկոս չէր նահատակի:

Որևէ քննադատության չի կարող դիմանալ նաև այն վարկածը, թե սպանության պատճառներից մեկը եղել է Խորհրդային Հայաստանի համար կազմակերպվող հանգանակությունների չաջակցելը: Վերոտին հենց այս

հատորում բերված վավերագրերը այնքան խոսուն կերպով վկայում են, որ Տրդեն Ա Մուրադբեկյանի համար սկսյալ 1915 թ. եղեռնի օրերից որևէ վարչակարգի կամ քաղաքական կուսակցության դեմ ունեցած բացասական ցանկացած արամադրվածություն որևէ ձևով չի արտահայտվել, երբ խոսքը վերաբերվել է ժողովրդի կարիքները գարմանելուն: Տարբեր առիթներով շարունակ շեշտել է Խորհրդային Հայաստանին և հայրենի ժողովրդին ամեն կերպ սատարելու, աջակցելու կարևորությունը: Այս առումով հատկանշական է հատկապես Սիլուանի հայությանն ուղղված 1934 թ. հուլիսի 20 թվակիր կոնդակը, որում ասվում է. «Վերջին մեծ պատերազմի հետևանքով մեր երկիրը աւերակների կոյտի վերածուեցաւ, ազգիս մի երրորդ մասը ոչնչացաւ սրի, սովի եւ տարափոխիկ հիւանդութիւնների յերեսից, բայց Տէրը խնայեց նորա մնացորդները, ժառանգութեան բաժին տալով մեր նախնեաց Պատմական հայրենիքի մի մասը, ներկայ Խորհրդային Հայաստանի սահմաններով, մի միլիոնից աւելի հայազգի բնակչութեամբ, որ տասն եւ հինգ տարուայ ընթացքում ձգտում է Խորհրդային Կառավարութեան ղեկավարութեամբ կազդուրուելու և առողջանալու իւր ընդունած վէրքերից»: Այնուհետև նկարագրում է, թե Հայաստանը ինչ հաջողությունների է հասել անտեսության վերականգնման, կրթության և գիտության բնագավառներում: Այս ամենը չէր գրվում սոսկ խորհրդային իշխանությունների բարեհաճությանն արժանանալու, կամ էլ միայն Մայր Աթոռը նոր հարվածներից զերծ պահելու համար:

Զորվելով վիրավորվածությունից և հալածանքից ծնվող այնքան մարդկային կրքերին, Հայոց Հայրապետը նկեղեցու դեմ ծավալված բռնությունների միջից իսկ տեսնում էր մի շատ կարևոր իրողություն՝ երկրի վերաշինությունը. տնավորվում էին արևմտահայության վերապրած բեկորները, Շիրակի ջրանցքի գործարկմամբ կենդանություն առան անջրդի շատ հողեր, դաբերի ընդմիջումից հետո հայրենի հողի վրա վերսին սկսեց ծաղկում ապրել հայկական մշակույթն ու գիտությունը: Հանուն այս ամենի, հանուն Մայր Աթոռի Հայոց Հայրապետը գնաց որոշակի զիջումների, բայց չանցավ այն դիծը, որից այն կողմ հանուն նկեղեցու արվածը կվերածվեր ընդդեմ նկեղեցու, և վճարեց իր կյանքով:

Տրդեն Ա Մուրադբեկյանի նահատակությամբ ստեղծվեց առժամանակյա ապաստողական մի վիճակ: Խորհրդային ղեկավարությունը բավականացավ Հայ նկեղեցին իր ընդհանրական դիրքից զրկելով, սակայն չհամարձակվեց դիմել հաջորդ քայլին՝ վերացնել Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, վախենալով գաղութահայության ընդվզման միջազգային հետևանքներից: Հայ ժողովուրդը միխիթարվեց նրանով, որ գոնե Մայր Աթոռը չվերացվեց, և, հանուն Մայր Աթոռի պահպանության, Հայ Եկեղեցուն հասցված այս հարվածը լռությամբ կրեց նաև Հայ հոգևորականությունը:

Տրդեն Ա Մուրադբեկյանի կյանքին ու հոգևոր գործունեությանը նվիրված այս հատորը, որը մանրակրկիտ քննությամբ ժամանակի պարբերական մամուլի հրապարակումների և տարբեր արխիվներում պահվող վավերագրերի հիման վրա ամենայն բարեխղճությամբ կազմել է Սանդրո Բեհբուդյանը, միաժամանակ ներկայացնում է Հայ հոգևորականության նորագույն Գողգոթան, որը 1920-ական թթ. սկսվեց քահանաների դեմ ծավալված հալածանքներով ու աքսորներով և իր լրմանը հասավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նահատակությամբ:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ